## Ճապոնիան մասնակցել է Հայկական միջազգային առաջին լուսանկարչական փառատոնին

Սեպտեմբերի 3-ին Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում դեսպան Յամադան ներկա է գտնվել Հայկական միջազգային առաջին լուսանկարչական փառատոնի շրջանակներում ներկայացվող աշխատանքների, այդ թվում՝ Ճապոնացի լուսանկարիչների աշխատանքների ցուցադրությանը: Միջոցառումը հյուրընկալել էին փառատոնի կազմակերպիչ, լուսանկարիչ տկն. Մնացականյանը և գեղանվեստի ակադեմիայի ռեկտոր պրն. Իսաբեկյանը: Ակադեմիայի ուսանողները և այլք նույնպես մասնակցել և գնահատել են ցուցանմուշները, այդ թվում՝ Ճապոնացի լուսանկարիչների աշխատանքները: Ճապոնացի չորս լուսանկարիչների աշխատանքները ցուցադրվում են Երևանի տարբեր վայրերում:
(Առաջին հայկական միջազգային լուսանկարչական փառատոնի մանրամասները՝ https://www.amphotofestival.com/ կայքում)



Լուսանկարիչ պրն. Ապիկյանը, դեսպան Յամադան, տկն. Մնացականյանը և պրն. Իսաբեկյանը զրուցում են լուսանկարիչ Շոտա Նագասեի լուսանկարի առջև



Գեղարվեստի ակադեմիայի ուսանողները և միջոցառմանը մասնակցած այլ անձինք





Դեսպան Յամադան լսում է տկն.

Մնացականյանի մեկնաբանությունները





Լուսանկարիչ Ջուն Սատոյի գործերը

Լուսանկարիչ Շոտա Նագասեի գործերը



Լուսանկարիչ Նոբուտադա

Կատաոկայի գործերը